ՀՈՒՆԱՐԵՆ ԲՆԱԳՐՈՎ ԱՆՀԱՅՏ ՀԱՏՎԱԾՆԵՐ Ս. ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ՝ ԵՋԵԿԻԵԼԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ՝

Հայ (և ոչ միայն հայ) թարգմանական մատենագրության մեջ մասնավոր կարևորություն ունեն հատկապես այն միավորները, որոնց բնագրերն այսօր անհայտ են: Կասկածից վեր է, որ այդպիսիք, լինելով բնագրին համարժեք, ունեն պատմամշակութային, աղբյուրագիտական նշանակություն: Հայ թարգմանական գրականությունը հարուստ է նման միավորներով: Դրանց հետազոտումն ու հրապարակումը իրենց նպաստը կարող են բերել ընդհանուր քրիստոնեական մտքի, եկեղեցական գրականության ուսումնասիրման գործին: Այդօրինակ միավորներից են Տիեզերական Եկեղեցու շողշողուն դեմքերից մեկի՝ Ս. Հովհան Ոսկեբերանի՝ Եկեկիելի մարգարեության մեկնության հրապարակվող հատվածները, որոնք սոսկ վկայում են հունարեն բնագրով մեզ չհասած այդ աշխատության երբեմնի գոյության մասին[1]:

Ս բնագիրն, ինչպես երևում է, այդ աշխատության նախադրությունն է, իսկ Բ-ն՝ ԼԷ 1-14 համարների մեկնությունը: Սրանցից պատ հայերեն ձեռագրերում Ոսկեբերանի անունով հայտնի է ևս մի բնագիր՝ «Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն Եզեկիելի. Յաղագս հանգուցելոցն ի Քրիստոս» (սկ. «Այլ թերեւս ոք առ լուծեալ եւ քակտեալ մարմինն հայեսցի...») խորագրով[2]: Այս միավորը սակայն, ինչպես նկատում է Հ. Բարսեղ Սարգիսյանը, իրականում մասն է Ս. Գրիգոր Նյուսացու անվամբ ձեռագրերում կենցաղավարող «Տեսութիւն ի մարդոյն կպվութիւն գլուխ յորում է իմն մասնաւորական յաղագս աշխարհիս բնախուզութիւն եւ գեղեցիկ իմն եւ պայծառ պատմութիւն» կամ «Յաղագս բնութեան մարդոյ» խորագրով երկի ԻԵ գլխի[3]:

Ս բնագիրը հրատարակվում է համաձայն Մաշտոցի անվան Մատենադարանի № 1981 (թ. 236ա-

---

[1] Մատենագիտական ընդհանուր տեղեկություններ տե՛ս G. Aucher, San Giovanni Cristostomo nella literatura armena - «Χρυσοστομικα», p. 147 հղումն ըստ M. Geerard, Clavis Patrum Graecorum, v. II. Brepols-Turnhout, 1974, p. 660:

[2] Մաշտոցի անվան Մատենադարան ձեռ. 1525, թ. 166ա-170բ, Երուսաղեմ, ձեռ. 1ա, թ. 259-261, Վենետիկ, ձեռ. 214, թ. 25բ:

[3] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ: Հատոր Երկրորդ: Ցօրինեաց Հ. Բարսեղ վ. Սարգիսեան, Վենետիկ, 1924, էջ 244:

238ա) ձեռագրի, իսկ Բ-ն՝ №=№=1007 (թ. 180ա-185բ), 7489 (թ. 164ա-166ա) ձեռագրերի:

1981

Ժողովածու: Ժամանակ՝ ԺԴ դ.: Գրիչ՝ Կյուրակոս, Հովհաննես, Մուխտիկ: Թերթ՝ 259: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 16,5 x 12,5: Գրություն՝ միասյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 18-29[4]*:*

A=*1007*

Ձառընտիր: Ժամանակ՝ ԺԱ-ԺԲ դդ.: Վայր՝ Հոռոմա՞յր: Գրիչ՝ Սոաքել: Ստացող՝ Հովհաննես քահանա: Թերթ՝ 466: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 34,5×24: Գրություն՝ երկսյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 25:

B=*7489*

Ձառընտիր: Ժամանակ՝ 1725-1729 թթ.: Վայր՝ Երուսաղեմ, Կ. Պոլիս: Գրիչ՝ Մարտիրոս երեց: Ստացող՝ Մարտիրոս երեց և որդին՝ տեր Բարդուղիմեոս: Թերթ՝ 471: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 29,5 x 20,5: Գրություն՝ երկսյուն: Գիր՝ նոտրգիր: Տող՝ 32[4]*:*

[4] Ձեռագրերի նկարագրությունը ըստ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Հատոր Ա, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Ջեյթունցյան, Փ. Անթաբյան, Երևան, 1965, էջ 457, 689-690, Հատոր Բ, Երևան, 1970, էջ 544-545:

Ա

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ Ի ՄԱՐԳԱՐԷՆ ԵԶԵԿԻԷԼ

Զի թէ հեռացուցեալ եւ մերձեալ էր կնոսա ոչ այնպիսի մեծ նշան կիւրոյ խնամոցն տայր նոցա Աստուած կմարգարէութենէն: Նաեւ այլ ոմն կամի ցուցանել կնորա թողուլ կնոսա եւ ասէր, թէ պատգամ պատուական էր եւ ոչ գոյր տեսիլ գիտութեան որոշէր նա եւ ինքեանք իսկ մարգարէին կայն դնէին թողման նշան. «ոչ գո, ասեն, ի ժամանակի յայսմիկ իշխան մարգարէ» եւ այլն: Եւ Ովսէէ ասէ. «Ոչ գոյր սեղան եւ ոչ պատարագ, ոչ քահանա եւ ոչ առաջնորդ իջանէր ի Բաբելոն»[1]*: Ինձ այսպէս թուի, թէ Յովակիմա. կի ոչ միայն լինէր թերութիւն նոցա, այլ՝ բաղում եւ ազգի ազգի: Տես կնորա սրբութիւն եւ կամ զգուշութիւն, թէ որպէս էր կամ որպէս պահէր կհրէական աւրէնսն, որ կայրն ի մէջ բարբարոսացն, որպէս եւ առ Դանիէլիւն եղեւ յոյժ դժուարութեամբ՝ ոչ ապաքէ՞ն այն լինէր վասն երկեղին Աստուծոյ: Ցուցանէր Աստուած կիւր կաւրութիւն ի մէջ առաքինութեան սրբոցն, կի հրէայքն թէպէտ եւ յիւրեանց բնակութենէն էին, ոչ պահէին կկամս Նորա: Իսկ այժմ թէպէտ եւ յերկիր աւտար երթային՝ պահելով պահէին եւ յիւրեանց սովորութեան կային մնային: Այս գրեցաւ, կի մի*

[1] Ովսէ Գ 4

երկնչիցիմք ի վշտացն եւ ի չարչարանացն, յորժամ վասն առաքինութեան ընդ մեզ ունիցիմք: Կրկին շուրջ կմարգարէին կային պատերազմունք յիւրոցն եւ յատարացն եւ առաւել յիւրոցն, քանզի բարբարոսքն առաւել ակնածէին ի նմանէ, որպէս եւ յԵրեմիայէ, նոյնպէս նմա մարտ եւ կռիւ յայգայնոցն: Ասէ թէ ընդ քահանայութեան ընկալաւ եւ կմարգարէութիւն, վասնզի ԻԵ (քսան եւ հինգ) ամ էր, յորմէ հետէ ոչ էր քահանեալ, որպէս եւ ասէ մարգարէն, թէ՝ «Ոչ գո իշխան եւ առաջնորդ վասն նուազութեան մարգարէիցն»[2], բայց Եզեկիել ոչ էր ի համար ամբարշտացն[1*], քանզի նա միայն, ըստ Դաւթայ ասէր «Ոչ ոք է արդար եւ ոչ մի, եւ ոչ ոք է, որ իմանա»[3]: Եւ միւս եւս չար, զի առանց իշխանութեան էին: Դժուար ուսմունք այնուհետեւ կեցեալք աւտար աւրինաւք դժուարին եւ անհնարին էր առ նոսա խրատն եւ ուսումն, այլ միշտ տեսանէր զնոսա հաւասար միմեանց անդարձ ի բարի: Գիտէին մարգարէքն զաւառ ոչ վխաղաղութիւն կամ զպատերազմ, այլ զմիշտ լսելն Աստուծոյ ոչ ասէին, թէ ընդէր մարգարէանամք անշահ եւ անաւգուտ. ոչ երբէք զայսպիսի ասէին: Արդ, զի՞նչ կամիցի նմա յայտ առնել երեսք քէրովբէիցն նոր իմն եւ զարմանալի եւ նմա միայնոյ յառաջ երեւեալ: Ասաց վասն քէրովբէիցն եւ Մովսէս, թէ՝ Հրաման ետ Աստուած քէրովբէին շուրջանակի պահել զճանապարհ ծառոյն կենաց[4], կոչիւր քէրովբէն փառաց եւ ի վրան ժամուն: Յիշէ զնոսին Դաւիթ եւ Եսայի եւ Դանիէլ. «Որ նստիսդ ի քէրովբէս»[5]: Եւ ոմն յարտաքնոցն ասէ. Լուր, որ նստիս ի քէրովբէական յաթոռ: Այլ յարտնագոյն զնոսա գրէ մարգարէն, զի եթէ մի իցեն եւ եթէ բազումք չգիտեմք ի յերկրի կամ յերկինս յերկրի եւ ի դրախտին ասելն յայտնի է, եւ զի յերկինս ցուցաւ, ցուցանի եւ այժմ յայդս. թուի, թէ բազումք են, որպէս Հրեշտակք եւ Հրեշտակապետք եւ Աթոռքն, եթէ կամիք նախ զանունս նոցա իմանալ, թէ զինչ յայտ առնեն, քանզի անունն քէրովբէի[2*] յեբրաեցոցն ի մերս թարգմանեալ է յաճախ գիտութիւն, զոր եւ կարգ բանին բազմատեսակն ասի, այս է՝ յամենայն կողմանց աչաւորս, լուսաւորս, որպէս ի ձեռն կերպարանաց իմն այնու Աստուած զիւր զաւրութիւն մեզ ցուցանէ որպէ՞ս կամ զիա՞րդ, զի յորժամ հուր երեւի՝ զծախողն եւ զմաքրողն նշանակէ, եւ յորժամ՝ ծերունի՝ զիմաստութեան ընտրութիւն, եւ յորժամ՝ սպիտակ՝ զանհնութիւն, եւ յորժամ՝ ի հանդերձս կարմիրս՝ զպատերազմողականն եւ յորժամ յԱթոռ նստեալ՝ զդատաւորականն, իսկ յորժամ ծուխ երեւեալ՝ զտանջողականն: Իսկ յորժամ զքէրովբէն պատմէ այսպէս իմա. յորժամ բազմաչեայս ցուցանէ՝ զլուսաւորութիւն իմա եւ յորժամ թեւս՝ զբարձրութիւն եւ յորժամ նստեալ ի սուրբսն՝ հանգուցեալս զԱստուած, նոյնպէս եւ

[1*] Ձեռագրում համպարշտացն:

[2] Դան. Գ 38:

[3] Սաղ. ԾԲ 4:

[2*] Ձեռագրում՝ հերոբի:

[4] Ծննդ. Գ 24:

[5] Սաղ. ՂԸ 1, Եսայի ԼԻ 16:

հրեշտակք բազում անգամ մարդակերպ երեւեալ, բազում անգամ ձիք՝ կգերութիւն նշանակելով, բազում անգամ եւ գոյն ձիոցն թեւաւորք ի նշանակ կաւրութեան, քանզի բան ոչ կարէ այնպէս երեւեցուցանել, որպէս դէմք: Վասն այնորիկ եւ նկարիչք ցուցանեն զկերպարանս գունոցն եւ երանգոցն գրեն զձեւս անփոփոխ ի մի վայր երբեմն զպատերազմն բարձացեալ եւ երկրի եւ ծովու ցասման եւ մահու նկարեալ կերպարանեն զպատերազմ, զփայլատակունս, զորոտմունս եւ որ ինչ նման է սոցին: Մի՛ հաւս կարծեսցուք վասն թեւոցն՝ այլ՝ զաւրութիւնս այնպիսիս, քանզի թեւաւորս տեսանեմք: Եւ զԴանիէլ առ Գաբրիէլիւ բազում անգամ եւ զյաղթութեան թեւաւոր գրէն զնմանութիւն վասն արագութեան հանդիսացուցանել կամին, զի երբեմն իջեալ դադարեալ եւ երբեմն թռուցեալ վաղվաղէ եւ ոչ երբէք դադարէ առ մարդկան, եւ զի ի վերուստ ուրեմն յերկնից յաղթութեան է եւ ոչ ի մէնք լինի: Բազումք եւ նման ցանկութենէ զթեւաւորսն գրէն զարագութիւն ախտիցն ցուցանելով, եւ զի ոչ ժամանակաւ հասանեն, այլ տեսեալ եւ նոյնժամայն, զախտսն ընկալեալ: Վասն որոյ ասէ ոմն. «Մի՛ զնէր զգեղ աւտար»[6], նաեւ մի՛ պատահէր կնոջ պոռնկի եւ մի՛ լկնիր ընդ երեսս նորա: Ի բաց փախիր եւ մի՛ դադարեսցես, եւ այնպէս վաղվաղակի անցանիցեն ընդ ջուրս աւտարս եւ գետս աւտարաւտիս: Նոյնպէս եւ Քրիստոս ասէ. «Որ հայի ի կին մարդ ի պատճառս ցանկութեան, անդէն շնացաւ ընդ նմա»[7]: Եւ ընդէ՞ր ամենայն տեսանէ զնա, քանզի Դանիէլ նստեալ տեսանէր «զՀին աւուրցն»[8], նոյնպէս Եզեկիէլ եւ Եսայի եւ Դաւիթ ասէ. «Որ նստիս ի քրովբէս, յայտնեաց»[9], եւ Երեմիաս յայտ առնէ, թէ՝ «Միշտ նստի յաւիտեան»[10]: Եւ ընդէր ասէ Դաւիթ, թէ՝ «Այժմ յարեայց, ասէ Տէր»[11]: Զի նստելն մշտնջենաւորութեան նշանակ է, ապա զիարդ եւ Դաւիթ ասէ. «Արի Տէր եւ մի՛ զաւրասցի մարդ»[12]: Տեսանեն զՆա եւ այլք ոմանք յոտն կանգուն որպէս Եսայի ասէ. «Այս ով է, որ դիմեալ գա յԵդովմա»[13]: Եւ այլ ոմն ի վերա սեղանոյ կանգուն: Իսկ Աբրահամ ի վանսն իւր ընկալաւ զՆա: Զի՞նչ ինչ արդեաւք մշտնջենաւոր նստելն Նորա յայտ արար զընտրութեան մարգարէն եւ ասէ, թէ՝ Աթոռն մշտնջենաւոր զիշխանութիւն յայտ արար, որպէս թագաւորք եւ իշխանք սովորաբար կոչին յաթոռ նստեալ: Վասն այսորիկ եւ Պաւղոս ասէ. «Որ է ընդ աջմէ Աստուծոյ եւ նստի ի վեր քան զամենայն Իշխանութիւնս եւ զՊետութիւնս»[14]:

Այլ, եթէ կամիս, ի գլուխ բանիս եկեսցուք

«Եւ եղեւ ասէ յերեսներորդում

[6] Սիրաք Թ 8:
[7] Մատթ. Ե 28:
[8] Դանիէլ Ը 9:
[9] Սաղ. ՂԸ 1:
[10] Ողբ Ե 19:
[11] Սաղ. ԺԱ 6:
[12] Սաղ. Թ 20:
[13] Եսայի ԿԳ 1:
[14] Կողոս. Գ 1:

ամին ի չորրորդում ամսեանն, որ աւր հինգ էր ամսոյն, եւ ես էի ի մէջ գերութեան (Ա 1). Սկիզբն ասէ. «Ես էի ի մէջ պանդխտութեան», Թէոդիտոն եւ Սիմաքոս «ի մէջ նժդեհութեան» ասացին, եւ թանասունքն «գերեւարութիւն» նշանակեցին, եւ այլք «փոխումն» ասացին, իբրեւ այն, թէ որպէս անպիտանս ոմանս յայլ երկիր ի Տեառնէ տեղափոխեալք:

Բ

ՅՈՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ՅԵՋԵԿԻԷԼԵԱՆ ՄԵԿՆՈՒԹԵՆԷՆ

«Եւ եղեւ ի վերայ իմ ձեռն Տեառն եւ եհան զիս հոգին Տեառն» (ԼԷ 1):

Յորժամ[1] կամի Աստուած նշանս առնել կամ կերպարանս ինչ երեսաց[2] ցուցանել եւ կամի զմարդիկ տեսողս[3] առնել իրին[4]՝ առանց ամբոխելոյ հրապարակաց կամ քաղաքաց գործէ զաքանչելիսն, որով[5] զՄովսէս եհան ի լեառնն եւ Քրիստոս՝ զաշակերտսն: Տես[6], զերթալն նորա ոչ ըստ կարգի աւրինաւոր գնացից լընթացս ոտից գնայր, այլ ասէ.

«Եղեւ ի վերայ իմ ձեռն Տեառն, եւ եհան զիս հոգին Տեառն».

Որպէս զՍամբակում առեալ զվարսիցն Յերուսաղէմէ ի Բաբելոն[7] եդ զնա, եւ յետոյ Հոգի Տեառն յափշտակեաց զՓիլիպպոս, եւ գտաւ յԱզովտոս եւ աւետարանէր զՔրիստոս[1]: Նոյնպէս եւ աստ[8] Եզեկիէլ մարգարէն[9] եւ դարձեալ, զի յաւժարեցուցանէ զմիտս նորա, զի զգաստացի[10] առ ի տեսանել զիրաշալի տեսիլն, որ լինելոց էր: Յայտ է[11] եթէ առ մեծ ինչ նշանակս կոչէ զնա Աստուած, ապա թէ ոչ՝ ոչ տանէր զնա այնպէս:*

«Եւ տարաւ եդ զիս ի մէջ դաշտին».

Ընդէ՞ր արդեաք[12], զի ամենայն ուրէք համարձակապէս թէ կամեսցի՝ կարասցէ տեսանել: Եւ ոչ որպէս հեթանոսք, որ ի խաւարին ու յաղջամղջին եւ յաներեւոյթ տեղւոջ առնեն զշաղփաղփանս իւրեանց:

«Եւ այն լի էր ոսկերաւք մարդկան».

Քանզի բարբարոսք[13] ոչ ինչ փոյթ առնեն թաղել զմարդիկ՝ անկեալք ի սուր պատերազմաւ, զի ոչ կարծի նոցա ամբարշտութիւն եւ անսրբութեան գործք անտես առնել զոսկերս դիականց:

Եւ շրջեցոյց զիս շուրջ զոսկերաւքն: Եւ ահա բազումք յոյժ էին ի վերայ երեսաց դաշտին (ԼԷ)

Սո ի տեսանել եւ ի[14] զննել եւ ճանաչել հաւաստեաւ զբնութիւնս ոսկերացն, զի ոչ առ աչաւք իցէ տեսիլն, քանզի բազումս տեսանէր զնոսա յոլովութեամբք յոյժ ցամաքեալք յոյժ: Դու համարեա թէ ոչ էին իսկ չորացեալ արեգակնակէզ տապով ջերմութեամբ կամ թէ զգեցեալ մարմնով էին, այլ բազում է առաւելութիւն, որ պատրաստ է ցուցանել զհանդէս սքանչելեացն գործելոյ Արարչին Աստուծոյ[15]. զի ո՞ւր յառնիցեն

1* Տե՛ս Գործք Ը 40:

այնչափ բազմութիւն մեռելոց. թեպէտ եւ կարի ոք անամաւթիցէ՝ ոչ լինի կարող դնել պատճառք եւ բարուրք, որպէս առ Ղազարաւն Մարթա զգարշ հոտոյն յառաջագոյն ասէր. «Արդ, հոտեալ է, քանզի չորեքաւրեա է»[2*] : Թոյլ տա այնմ լինել, ամենայն ուրեք զայն գործէր, յամէր եւ թոյլ տայր չորէքաւրեա լինել, զի հանցէ զնոցա պատճառսն, զի յորժամ զարմանք աքանչելեաց լինի՝ մի՛ ոք անհաւատ լիցի ի յարութեան, զի անձամբ զանձն ոչ յառաջ ձգէր ժամանակ մի զաւղեալ, զի ինքեանք իսկ լինիցին վկայք իրացն: Նոյնպէս առ կոյրն, որ կոչեն զհայրն եւ զմայրն, զի ինքեանք իսկ վկայեսցեն: Կարէր նշանս ինչ յայտնագոյնս առնել, զի մի կարասցեն ասել, թէ ոչ էր կոյր, այլ թոյլ տա անձանց իւրեանց յաղթել իրացն ճշմարտութեան: Զի թեպէտ երկեան ծնաւղքն, սակայն ճշմարտութիւն յայտնի երեւեցաւ, թեպէտ եւ կամեցաւ ի հրէիցն ակն ածել՝ զբժիշկն թաքուցանելով, սակայն վասն որդւոյն իւրեանց խոստովան լինէին, եւ զքանչելիսն յայտնէին ասելով, թէ ոչ գիտեմք, թէ որպէս տեսանեմք այժմ[16], վասնզի ոչ ակն առնուին Յիսուսի: Այնպէս իսկ է, զստուգութիւն ծածկէին եւ զեղեալսն ոչ հանէին ի վեր, ապա յայտ է, թէ զոչ եղեալսն բնաւ ոչ ունէին յանձին[17]:

«Ցամաքեալք յոյժ» (ԼԷ 2)

Յամենայն կողմանց անոյսք եւ թափուրք յոյժ, զի ոսկր[18] թեպէտ ի մարմնի է, հեռի է ի կենդանութենէ անդամոցն, իսկ յորժամ վախճանի եւ բազում ժամանակ անցանի՝ ո՞րչափ եւս: Կարող էր Աստուած առանց մարմնոյ եւ ոսկերաց ցուցանել զաւրութիւն միայն, այլ ոչ այնպէս հաւատարիմ լինէր, որպէս առաջի կայր աւրինակն: Առաւել զարմանք այն էին, զի նոքա յարիցեն: Եւ թէ այլ մարմին յարուցանէ մեզ կամ գոյացուցանէ, ապա ոչ հոսնեալ եւ չորացեալ ոսկերքն յառնէին, զի մի ոք ընդ յերկար ժամանակն հրաժարեսցէ[19] եւ չունիցի ակն դարձի գերութեան, ցուցանէր զկայ դարձին[20] զչորացեալ եւ զցամաքեալ ոսկերսն յարուցեալ: Տեսանես, զի նշանն մեծ էր քան զիրսն: Զի նորքս հաւատասցուք մեր ցամաքեալ ոսկերացս եւ մարմնոցս յարութեան եւ դառնալ հոգւոյս յիւրաքանչիւր մարմին հրամանաւն Աստուծոյ ի վերջին աւրն[21]:

«Եւ ասէ ցիս Տէր. որդի մարդոյ իցէ՞ թէ կենդանի լինիցին ոսկերքդ այդոքիկ» (ԼԻ 3). Որպէս[22] զՄովսէս հարցանէր.

«Զի՞նչ է այդ, որ ի ձեռին քո է», զի նախ մարգարէն խոստովանեսցի, թէ մեռեալ ոսկերք են: Որպէս Մովսէս պատասխանի տայր, թէ՝ գաւազան է, նոյնպէս եւ այս մարգարէս ասէ. «Տէր Տէր դու գիտես զայդ» (ԼԻ 3): Բազում իմաստութեամբ եւ յոյժ հաւատով լի է պատասխանիս, զի թէ ասացեալ էր, թէ ոչ կենդանասցին եւ Աստուած կենդանացուցանէր, սուտ լինէր մարգարէ[23] վասն այնորիկ ասէր. Դու գիտես զայս: Եւ ընդէ՞ր ոչ ասաց. եթէ կամիս՝ կեցցեն:

2* Յովհ. ԺԱ 33:

Վերագոյն անցանէր, քան կմարդկան բնութիւն, կի ոչ որպէս կարէ Աստուած առնէ ինչ, այլ, որպէս պատշաճ է ժամանակին, կայն գործէ:

«Եւ ասէ ցիս Տէր. որդի մարդոյ մարգարեաց ի վերայ ոսկերացդ այդորիկ» *(ԼԷ 4):*

Եւ ընդէ՞ր ինքն ոչ առնիցէ[24] *կայն, այլ մարգարէին բարբառովն յարուցանէ: Քանզի վասն դարձի գերութեան նովին բարբառովն ասաց: Եւ կաս յապայ լինելոցն նովա հաստատէր, վասնզի մարդկան տայ Աստուած կարողութիւն կայն առնել, որպէս առաքելովքն՝ կկարութիւն իւր առաւել ցուցանէր, ըստ Իւրում բանին. «Որ հաւատա յիս, զգործսն, զոր ես գործեմ եւ նոքա առաւել գործեսցեն»*[3*] *: Եւ որ այլոց կարէ տալ կայնպիսի կարութիւն եւ*[25] *յորժամ առնէ նմանէ կհաստատութիւն իրին հաւատոյ: Ապա ասէր ցմարգարէն հրաման տալով.*

«Մարգարեաց ի վերայ ոսկերացդ այդոցիկ» *(ԼԷ 4), այսինքն՝ հրամայեա իշխանաբար, ասա եւ*[26]*լինի. մարգարէութիւն կիրսն կոչէ, քանզի մարգարէութիւն աւրինակ կարութիւն է բանին: Մեռեալ եւ ցամաքած ոսկերացն ի դաշտին կենդանութիւն շնորհէր: Նոյնպէս եւ ի ձեռն հրեշտակացն լինելոց է*[27]*. Զայն փողոյն*[28] *յարութիւն ամենայն աշխարհի: Դու նշանակեսքիր յառաջագոյն*[29] *զոր լինելոց է, եւ ապա ես ի վերջին աւուրն կայն արարից*[30]*:*

«Եւ ասացես ցդրսա. Ոսկերք ցամաքեալք լուարուք զբան Տեառն. այսպէս ասէ Տէր ցոսկերսդ ցայդոսիկ. Ահաւասիկ ես ածեմ ի վերայ ձեր շունչ կենդանի եւ տաց ջիլս, եւ ածից ի վերայ ձեր մարմինս, եւ ձգեցից ի վերայ ձեր մորթ» *(ԼԷ 5-6):*

Եւ այն, կի մարգարէին էր բանն եւ հրամանն՝ Աստուծոյ եւ կարութիւն: Իսկ իրն ամենայն մարգարէին բանին կհետ գայր. «մարմին», «մորթ», «ջիլք», «շունչ» եւ այլ ամենայն ոչ այլուստ կամ աւտար, այլ ի իւրաքանչիւր ուրուք իւրն ամենայն: Եւ այն ի միում վայրկենի հրաշագործէր[31]*:*

Տեսանե՞ս, կի յոչնչէ առնէ, որպէս յիսկզբանն ասաց եւ եղեն, հրամայեաց եւ հաստատեցան արարածք, նոյնպէս եւ ի կատարածի աշխարհի լինելոց է:

«Եւ տաց կհոգի իմ ի ձեզ, եւ լինիջիք կենդանիք»[32]

Հոգի եւ շունչ միասին[33] *ի Գրոց Աստուծոյ հոգի շունչ կենդանութեան ասի աստ:*

«Եւ[34] *ծանիջիք, թէ ես եմ Տէր» (ԼԷ 6) հաւաստեաւ կենդանութիւն է ճանաչելն զՏէր «Որ հաւատա յիս՝ ընդունի զկեանս»*[4*] *եւ «ծանիցեն, զի անուն Քո Տէր է»*[5*][35]*:*

«Եւ մարգարէացա, որպէս հրամայեաց ինձ Տէր: Եւ եղեւ բարբառ ի մարգարէանալն իմում: Եւ ահա շարժումն, եւ մերձեցաւ ոսկր առ ոսկր առ իւրաքանչիւր յադս» *(ԼԷ 7):*

Այս[36] *եւ ի հասարակաց յարութեան լինելոց է, զի կերծուցանէ*

3* Ցովհ. Ժ 25:

4* Ցովհ. Զ 47:

5* Սաղ. ՁԲ 19:

կտեսղոսն, թէ մերձ են կարմանքն առ ի յուսումն, եւ կի ոչ ինքնակամ լինելոց է այն, այլ ի վերուստ յԱստուծոյ հրամայեալ, իմանալ, թէ աստուածային կաւրութեան է գործն[37], *եւ շարժումն վասն Աստուծոյ հպատրութեան լինէր: Տեսակաւ իրաւք նկարեալ կյարութիւն յետ սորուն եւ միւս անգամ գալստեանն Քրիստոսի: Փողն*[38] *նշանակէ կյարութիւն տիեզերաց, կի ոչ այլ կաւրութիւն կարէ կայն գործել:*

«Եւ տեսի եւ ահա ջիլք եւ մարմինք պատէին եւ ձգէին ի վերայ նոցա մորթք, եւ շունչ ոչ գոյր ի նոսա» (ԼԷ 8):

Հայեաց դու ընդ եղեալ կարմանս, եւ ոչ յանկարծաւրէն, կի որպէս առաջին մարդն ստեղծեալ[39], *նոյնպէս եւ*[40] *ոսկերքն, կի մի՛ կարծիցես, եթէ հոգոյն*[41] *է յարութիւն կամ նորա կաւրութեան է գործն: Նախ կանաւթն ստեղծանէր եւ ապա կբնակիչն մուծանէր: Եւ*[42] *ոչ ի փոքր ժամու տայր, այլ բակում ժամս ի խաւսման կայր Աստուած եւ ի մէջ շնչոյն եւ մարմնոյն, կի գիտասցեն, թէ ի ներքս ի յարգանդինս տանի մանուկն եւ ապա բնակէ շունչ ի ստեղծուածին ի հաստատեալ անդամսն, եւ յաւրինեալ կերպարանն եւ ոչ շունչն ստեղծանէ կմարմինն, նոյնպէս եւ յիսկբանն լինէր Ադամայ*[43]*:*

«Եւ ասէ ցիս Տէր, որդի մարդոյ մարգարեաց ի վերայ շնչոյն եւ ասասցես ցշունչսն*[44]*: Այսպէս ասէ Տէր. եկ շունչ ի չորից հողմոց եւ փչեա ի մեռեալս յայսորիկ եւ կեցցեն» (ԼԷ 9):

Զի չորս կողմ աշխարհին[45] *գրեալ էին, ի չորից կողմանց բնակչաց երկրի ածցէ կնոսա, վասն այնորիկ ասէ. Ի չորից կողմանց լիցի աւգնականութիւն: Զի այն, որ կշունչն ամենայն ուրեք կարէ ժողովել եւ ամփոփել ի մի վայր, կարէ եւ կորդիսն Իսրայէլի, ուր եւ իցեն ցրուեալք, յիւրեանց բնակութիւն ածել*[46]*: Բայց դու իմա ոչ կմիտս եւ ոչ կկենդանութիւն եւ ոչ այլ ինչ արտաքո քան կշունչն, այլ ամենայն ինչ հոգոյն է, թէ շունչ ասի կամ ջիլք կամ նեարդք կամ ոսկերք ի հոգի կենդանութիւն եղեւ մարդն:*

«Եւ մարգարէացա, որպէս հրամայեաց ինձ Տէր: Եւ եմուտ նոսա շունչ, եւ եղեն կենդանիք: Եւ կանգնեցան*[47] *կացին ի վերայ ոտից իւրեանց ժողովուրդք բազում յոյժ յոյժ» (ԼԷ 10):

Տե՛ս, կի ի ձեռն մարգարէին նշանք լինէին, կի պատուական եւ ընդունելի լինիցի մարգարէութիւն[48]*, կի ոչ թէ վայրապար ինչ լիցի: Եւ տես՝ որպէս վասն գերութեան առնէր նշան կաթսա յեռանդուն ի վերա կայծականցն հրոյ եղեալ եւ ախս, նոյնպէս եւ մարգարէն վասն ի գերութիւն վարեալ ժողովրդեանն կերծեր զգլուխն եւ կմորուսն: Նոյնպէս եւ վասն դարձին նշանակ առնէ, քանզի Դանիէլ դէմս տեսանէր մարգարէութեամբ, իսկ Եզեկիել զգործոյն ցուցանէր կկաւրութիւն իւրաւքն հանդերձ՝ առ ի հաւանեցուցանել կժողովուրդն*[49]*:*

«Եւ խաւսեցաւ ընդ յիս Տէր եւ ասէ. Ոսկերքդ այդոքիկ տունդ Իսրայէլի է» (ԼԷ 11):

Քանզի առ ոսկերսն եւ առ ժողովուրդն ձգէր կառոյապա լինելոցն կընդհանրական[50] *յարութիւն,*

զի թէ առնուազն եւ առ սակաւսն այն լինէր, դիւրին է Աստուծոյ եւ առ բազմամբ ըստ պյարութեան գործել:

«Ահաւասիկ ես բացից զգերեզմանս ձեր եւ հանից զձեզ ժողովուրդ իմ, եւ տարայց զձեզ յերկիրն Իսրայէլի» (ԼԷ 12):

«Խօսեցայ եւ արարից, ասէ Տէր Տէր» (ԼԷ 14):

Քանզի զերկիրն բաբելացւոց գերեզման կոչեաց եւ վիհ, ուստի ապատեալք ակնարկութեամբն Աստուծոյ՝ Սաղաի Տէր զաւրութեանց ելանէին, նոյնպէս եւ մեռեալք՝ ի գերեզմանաց ի յետին աւրն: Բայց այսոքիկ գրեցան ընդդէմ այնոցիկ, որք թերահաւատ են յարութեան մեռելոցն մարմնոց եւ առասպելական տողս յեռուն իւրեանց փրկութեան ընդդէմ կռուելով զմարմնոյն ապականութիւն, որ ի հրոյ եւ ի ջրոյ ի ձկանց եւ ի գազանաց բազում վկայութեամբ եւ յաւրինակաւ յանդիմանէին զնոսա: Զի քան զայս զի՞նչ այլ ծիծաղելի. զԱստուած Արարիչ խոստովանել եւ զոր յանգոյից ի լինելութիւն եւ ի գոյութիւն էած, ասել, թէ յետ քակմանն անկարութիւն է վերստին յարուցանել, որ եւ ինքն՝ Ստեղծիչն խոստացաւ, «զի եկեսցէ ժամանակ, զի ամենեքեան, որ ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի Որդւոյն Աստուծոյ եւ եկեսցեն արտաքս»[6]: Եւ զարթուսս իրացն ի մաւտոյ եցոյց ի տունն Այրոսի եւ յորդի այրոյն եւ ի Ղազար[7*]: «Եւ ի խաչելութեան աւուրն բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան»[8*] : Վկայէ եւ մարգարէն Եսայի, քարոզէ. «Յարիցեն մեռեալք եւ կանգնեսցին ամենեքեան, որ եղեալ են ի գերեզմանի»[9*]: Եւ Պաւղոս ասէ. «Թէ այսու կենաւքս միայն յուսացեալ եմք, ապա ողորմելի եմք քան զամենայն մարդիկ»[10*] եւ թէ՝ «Իւրաքանչիւր ոք ընդունելոց է իւրով մարմնով, զոր ինչ գործեաց զհատուցումն բարեաց գործոցն եւ չարեաց»[34]:[11*]*

6* Յովհ. Ե 28-29:

7* Տե՛ս Մարկ. Ե 22, Ղուկ. Ը 41, Յովհ. ԺԱ 43-44:

8* Մատթ. ԻԷ 52:

9* Եսայի ԻԶ 19:

10* Ա Կորնթ. ԺԵ 19:

11* Բ Կորնթ. Ե 10:

ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

1 B *Զի յորժամ: 2* A *չիք երեսաց: 3* A *տեսող: 4* B *իրի: 5* B *որպէս եւ: 6* B *Աստ փխ. Տես: 7* B *Բաբելովն: 8* A *չիք աստ: 9* A *չիք մարգարէն: 10* A *ազատացի: 11* B *Յայտնի է: 12* B *չիք ընդէր արդեւք: 13* A *բարբառոսք: 14* A *չիք ի: 15* B *սքանչելագործին Աստուծոյ փխ. սքանչելեացն... Աստուծոյ: 16* A *ածմ: 17* B *ծածկել ոչ կարէին, զի եղեալքն վկայէին փխ. ծածկէին... յանձին: 18* B *ոսկերք: 19* B *յոսկերսն յարուցանէր Աստուած, զի մի ոք երկարն ժամանակ թերահաւատիցի փխ. ոսկերքն... հրաժարեսցէ: 20* B *չիք դարձին: 21* A *չիքԶի նորքս հաւատասցուք... վերջին աւրն: 22* A *Որդպէս:* B *Որպէս Աստուած: 23* A *մարգարէր: 24* B

յարուցանէ փխ. առնիցէ: 25 B *չիք եւ: 26* B *չիքեւ: 27* B *չիք եւ ի... լինելոց է: 28* B *փողոյն հրեշտակապետին: 29* B *յառաջագոյն աւրինակաւդ: 30* A *առնեմ: 31* A *չիք Եւ այն պի մարգարէին էր բանն... իրն ամենայն: 32* B *կենդանի: 33* B *միապէս: 34* B *չիք եւ: 35* B *չիք «Որ հաւատա... Տէր է»: 36* A *Այսպէս: 37* B *գործ: 38* B *վի փողն: 39 Աղամայ ստեղծանիլն փխ. առաջին մարդն ստեղծեալ: 40* B *եւ առ: 41* B *հոգոյն: 42* B *չիք եւ: 43* B *Բայց դու յիմա, վի միտք եւ կենդանութիւն եւ ամենայն ինչ հոգւոյն է, շունչ եւ ջիլք եւ նիարդք եւ ոսկերք, վի ի հոգի կենդանութեան եղեւ մարդն: 44* A ***ձեռագիրը նորոգելիս թիւրիմացաբար այստեղ (թ. 184 աբ) այլ բնագրից («Չորրորդ շաբաթին երեքշաբթի աւուրն» թ. 162 աբ, 184 աբ, 163ա-6բ), թերթ է կցուել. «///նդերձս, վասնվի ծածկեալ կայր Քրիստոսի տնաւրինութիւն... ի դժոխոց եւ ի մահուանէ///», ինչը արձանագրուած է ձեռագրիս ընդարձակ նկարագրութեան մեջ:*** *45* B *երկրին փխ. աշխարհին: 46* B *ածել: Նոյնպէս եւ առաքեսցէ վընտրեալս իւր ի չորից հողմոց ի վերջին օրն եւ բնակեցուցանէ ըստ արժանեացն: Նոյնպէս եւ վբաժանեալ հոգի եւ վմարմին ի միասին կապէ (չիք Բայց դու իմա... եղեւ մարդն): 47* A *կանկնեցան: 48* B *մարգարէութիւն վասն դարձի գերութեան: Վասնվի գերութեան առնէր վնշան, որպէս Երեմիայ կաթսա եռանդեան տեսանէր ի վերայ կայծականց հրոյ եղեալ՝ նոյնպէս եւ նոյն մարգարէս վասն գերութեան գնալոյ ժողովրդեան վերծէր վգլուխն եւ վմորուսն: 49* B *վժողովուրդն վասն դարձին եւ մեռելոյն յարութեան: 50* A *վընթիանրական: 51* B *չիք Սաղափ Տէր վաւրութեանց: 52* A *վաւրութեանց որում փառք յաւիտեանս: Շար. չիք: 53 Ձեռ. Ստեղծեղծիչն: 54 եւ չարեաց: Արդ անհուն է վկայութիւնս ի Սուրբ Գրոց վասն այս բանիցս, վոր գրեցաւ ի փառս ամենասուրբ Երրորդութեան՝ Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն. Ամէն:*

ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆ